ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԼՈՅԹԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԷՆ

Ցանուն Հայաստանեայց Եկեղեցու ողջունում եմ ձեզ եւ բոլորիդ բերում իմ օրհնութիւնը Սուրբ Էջմիածնից:

Մանրօրէն մտահոգուած եմ նաեւ ես եւ բաժանում եմ իմ ժողովրդի յուզումը Լեռնային Ղարաբաղի մարզը Սովետական Հայաստանին միացուելու հարցի կապակցութեամբ:

Ես գտնում եմ այդ առաջադրանքը բնական եւ օրինական ու սահմանադրական, որով հաւատում եմ, թէ մեր օրերի վերակառուցման եւ դեմոկրատիայի ոգով, Սովետական Միութեան բարձր իշխանութիւնները ամենայն կարեւորութեամբ կը յանկեն մի արդար ու անկողմնակալ որոշման:

Այս օրերս ես բազմաթիւ հեռագրեր ու հեռախօսներ եմ ստանում նաեւ արտասահմանի մեր եկեղեցական եւ մշակութային կազմակերպութիւններից, որոնք սփիւռքի աւելի քան երկու միլիոն հայութեան անունից խնդրում են իմ միջնորդութիւնը Սովետական Միութեան բարձր ղեկավարութեան առաջ, որպէսզի արդարացի լուծում ստանայ Հայկական Ղարաբաղի հարցը, համաձայն Սովետական Միութեան սահմանադրութեան, համաձայն Ղարաբաղի ժողովրդական դեպուտատների սովետի որոշման եւ համաձայն դեմոկրատիայի սկզբունքների:

Ընթացք տալով այս դիմումներին, ես արդէն իսկ մի բովանդակալից հեռագիր եմ ուղարկել մեր երկրի առաջին ղեկավար՝ մեծայարգ Տիար Միխայիլ Կորպաչեւին, խնդրելով նրա վճռական նպաստը յօգուտ Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան սպասումների:

Հայ ժողովուրդը ինչպէս Հայաստանում, այնպէս էլ արտասահմանում միշտ հաւատարմօրէն կանգնած է Սովետական Միութեան ազգութիւնների եղբայրութեան եւ ռուս ժողովրդի հանդէպ պատմականօրէն նուիրագործուած անխախտ բարեկամութեան հիմքերի վրայ, իր հոգու հայեացքը ուղղելով դէպի մեր երկրի բարձր իշխանութիւնները լաւատէս ապրումներով, մանաւանդ որ յայտնի է ձեզ բոլորիդ մեր վերին իշխանութեան հաւաստիացումը, թէ շատ մօտ ապագայում, Մոսկուայում բարձր մակարդակի վրայ պէտք է գումարուի յատուկ նիստ բննարկելու եւ օրինաւոր լուծում տալու Հայկական Ղարաբաղի հարցին Սովետական Միութեան մէջ ազգութիւնների ինքնորոշման իրաւունքների հիման վրայ:

Հարազատներ մեր, ես այս օրերին գնահատել եմ ձեր յուզումը եւ համաժողովրդական արտայայտութիւնները: Արդէն ամէն ինչ ասուած է եւ այժմ անհրաժեշտ է, որ լաւատեսութեամբ եւ յարգանքով մեր հայրենի պետական բարձր իշխանութեանց հանդէպ, մնաք խաղաղ ու կարգապահ, լծուած ձեր ամէնօրեայ աշխատանքներին եւ սպասէք առաջադրուած հարցերի լուծման, պահպանելով մեր հաւասարակշռութիւնն ու ողջմտութիւնը, նոյն ինքը յօգուտ հարցերի բարւօք լուծման: Նման տագնապալի պահերին անհրաժեշտ է ցուցաբերել հայ ատրպէյճանական ժողովուրդների եղբայրութեան հրամայականը, որպէսզի կանխուեն ազգամիջեան ցաւալի անախորժութիւնները Հայաստանում եւ թէ Ատրպէյճանում: Վստահ եղէք այս է պատգամը նաեւ սփիւռքի ձեր հայ եղբայրների ու քոյրերի ուղղուած ձեզ:

Այլապէս արդար գործի յաջող ընթացքը կարող է խանգարուել եւ չնախատեսուած բարդութիւնների առաջ կանգնեցնել մեզ: Մեր բոլորիս նպատակը պէտք է լինի ոչ թէ ձախողեցնել, այլ յաջողութեամբ պսակել արդարութիւնը:

Մեր հայրենիքի ու ազգի առաջ պատասխանատուութեան խոր զգացումով, իբրեւ Հայրապետ Ամենայն Հայոց, ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ Սուրբ Աւետարանի պատգամով՝ «Խաղաղութիւն Հեռաւորաց, Խաղաղութիւն Մերձաւորաց, Խաղաղութիւն Ամենեցուն»: Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ